Հասցեատեր՝

«Ուրարտու ՖԱ» ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ g.vardanyan@fcurartu.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16.11.2023թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նարեկ Ադամյան
	Արփի Լազարյան
	Դավիթ Բակլաչյան

Վարույթ՝	ՊԼ-081
Խախտում՝	1. «Ուրարտու» թիմի ֆուտբոլիստ Եվհենիի Ցիմբալյուկ (45102) կողմից խաղընկերոջը հարվածելը (Հավելված 1 Բ, 17-րդ կետ) 2. «Ուրարտու» թիմի ֆուտբոլիստ Մարկոս Անտոնիո Քանդիդո Ֆերեյրա ժունիորի (44520) կողմից խաղընկերոջը հարվածելը (Հավելված 1 Բ, 17-րդ կետ)
Առաջնություն՝	2023-2024 IDBank Պրեմիեր Լիգա
Խաղ՝	«Վան» - «ՈՒրարտու», 12.11.2023թ. (2:2)

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը և այն հանգամանքը որ Կոմիտեի՝ 30.09.2023թ.-ի որոշման համաձայն՝ «Ուրարտու» թիմի ֆուտբոլիստ Եվհենիի Ցիմբալյուկը (45102) ենթարկվել է 2 (երկու) խաղ պայմանական որակազրկման և կարգապահական խախտումը կատարելու պահին գտնվել է փորձաշրջանի մեջ՝ վերջինիս որակազրկել 4 (չորս) խաղով և տուգանել «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ին նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկի՝ 250,000 ՀՀ դրամի չափով: Որակազրկումը տարածվում է 2023 թվականի նոյեմբերի 12-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում):
2. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը և «Ուրարտու» թիմի ֆուտբոլիստ Մարկոս

Անտոնիո Քանդիդո Ֆերեյրա ժունիորի (44520) կողմից նույն մրցաշրջանում կարգապահական խախտում կատարելու կրկնակիությունը՝ վերջինիս որակազրկել 2 (երկու) խաղով և տուգանել «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ին նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկի՝ 250,000 ՀՀ դրամի չափով: Որակազրկումը տարածվում է 2023 թվականի նոյեմբերի 12-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում):

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

<u>Ծանուցում</u>

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100.000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: